ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Հ Ր Ա Մ Ա Ն

31 հոկտեմբերի 2024 թվականի № 446-Ա

«ՖՈՒԴՍԻԹԻ» ՍԱՀՄԱՆԱՓԱԿ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆԸ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմի և «ՖՈՒԴՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերության միջև 2024 թվականի հուլիսի 31-ին կնքվել է «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-1», իսկ 2024 թվականի օգոստոսի 12-ին՝ «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24-1» ծածկագրերով պետական գնման պայմանագիրը, որից հետո Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հունիսի 27-ի № 1000-Ն որոշման համաձայն 2024 թվականի օգոստոսի 15-ին կնքվել է «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-1» ծածկագրով պայմանագրի կից համաձայնագիրը 3 ու 10 չափաբաժիններով, իսկ 2024 թվականի օգոստոսի 30-ին՝ «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24-1» ծածկագրով պայմանագրին կից համաձայնագիրը՝ 51, 62 ու 63 շնորհված չափաբաժիններով:

Համաձայն համաձայնագրին կից «Տեխնիկական բնութագիր և գնման ժամանակացույց» հավելված №1-ի մատակարարման ժամկետներ են սահմանվել համաձայնագիրը ուժի մեջ մտնելու օրվանից 21-րդ օրը, սակայն մինչ օրս ապրանքները դեռ չեն մատակարարվել:

«ՖՈՒԴՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը էականորեն խախտել է պայմանագրով սահմանված պարտավորությունները՝ այն է չի մատակարարել պայմանագրով նախատեսված ապրանքները և Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմը հրաժարվել է 2024 թվականի հուլիսի 31-ին կնքված «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24/4-1» և 2024 թվականի օգոստոսի 12-ին կնքված «ԿՈՏ-ՀՈԱԿ-ԷԱՃԱՊՁԲ-24-1» ծածկագրերով պետական գնման պայմանագրերից, համարելով դրանք ամբողջությամբ և միակողմանի լուծված, իսկ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառել է Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետի, պայմանագրի 2.1.7 և 8.11 կետերով սահմանված դրույթները՝ այն է պայմանագիրը կնքած անձի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրը ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը:

Պայմանագիրը կնքած անձը համարվում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին պատշաճ ծանուցված՝ ծանուցումը տեղեկագրում հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը ուղարկվում է նաև պայմանագիր կնքած անձի էլեկտրոնային փոստին:

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզպետի աշխատակազմը 2024 թվականի հոկտեմբերի 25-ի № 02/10.1/07392-2024 գրությամբ դիմել է ընկերությանը սպասարկող «ԿՈՆՎԵՐՍԲԱՆԿ» փակ բաժնետիրական ընկերությանը վերը նշված պայմանագրերի կատարման ապահովումները և որակավորման ապահովումները կատարելու պահանջով, սակայն սույն հրամանի կայացման պահին բանկից ոչ մի արձագանք ստացված չի եղել:

Քաղաքացիական օրենսգրքի 345-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ «Պարտավորության ուժով մի անձը (պարտապանը) պարտավոր է մեկ այլ անձի (պարտատիրոջ) օգտին կատարել որոշակի գործողություն, այն է վճարել դրամ, հանձնել գույք, կատարել աշխատանք, մատուցել ծառայություն և այլն, կամ ձեռնպահ մնալ որոշակի գործողություն կատարելուց, իսկ պարտատերն իրավունք ունի պարտապանից պահանջել կատարելու իր պարտավորությունը»:

Քաղաքացիական օրենսգրքի 408-րդ հոդվածի համաձայն՝ «Պարտավորության խախտում է համարվում այն չկատարելը կամ անպատշաճ (կետանցով, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների թերություններով կամ պարտավորության բովանդակությամբ որոշվող այլ պայմանների խախտմամբ) կատարելը»:

Քաղաքացիական օրենսրքի 466-րդ հոդվածի 3-րդ մասի համաձայն «Պայմանագիրը լրիվ կամ մասնակի կատարելուց միակողմանի հրաժարվելու դեպքում, երբ պայմանագրից հրաժարվելը թույլատրվում է օրենքով կամ կողմերի համաձայնությամբ, պայմանագիրը համապատասխանաբար համարվում է լուծված կամ փոփոխված»:

Պայմանագրերի 2.1.1-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չկատարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են տաս օրից ավելի:

Պայմանագրերի 2.1.7-րդ կետի համաձայն՝ գնորդն իրավունք ունի, միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը:

Պայմանագրերի 2.1.7.1-րդ կետի համաձայն՝ վաճառողի կողմից պայմանագրի խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որոկի ապրանք, որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են տաս օրից ավելի:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն այն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ներառված են գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որտեղ ընդգրկվում են եթե խախտել են պայմանագրով

նախատեսված պարտավորությունները, որն էլ հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի ամբողջությամբ կամ մասնակի լուծմանը:

«Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն նշված ցուցակը վարում և հրապարակում է լիազորված մարմինը, ով մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում պատվիրատուի ղեկավարի պատճառաբանված հրամանի հիման վրա, որը կայացնում է պայմանագիրը միակողմանի լուծելու մասին որոշումը հրապարակելու օրվան հաջորդող տասն օրվա ընթացքում; Հրամանը կայացնելու հաջորդ օրը այն տրամադրվում է լիազորված մարմնին և մասնակցին: Լիազորված մարմինը մասնակցին ներառում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, իսկ որոշումն ստանալուն հաջորդող քառասուներորդ օրվա դրությամբ մասնակցի կողմից որոշման բողոքարկման վերաբերյալ հարուցված և չավարտված դատական գործի առկայության դեպքում՝ տվյալ դատական գործով եզրափակիչ դատական ակտն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող հինգ օրվա ընթացքում, եթե դատական քննության արդյունքով որոշման կատարման հնարավորությունը չի վերացել: Մասնակիցը նշված ցուցակում ընդգրկվում է ներառվելու օրվան հաջորդող երկու տարի ժամկետով:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի «ա» ենթակետով և 6-րդ հոդվածի 2-րդ մասով, ինչպես նաև հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի № 526-Ն որոշման 33-րդ կետի 17-րդ ենթակետը՝ **հրամայում եմ.**

1. «ՖՈՒԴՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը (ՀՎՀՀ 01028873, հասցե՝ ք. Երևան, Նոր Նորք, 0090, Գայի պ., Շ 11, Բն. 20) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում 2 տարի ժամկետով:

2. Սույն հրամանի օրինակը օրենքով սահմանված կարգով ներկայացնել լիազոր մարմնին և «ՖՈՒԴՍԻԹԻ» սահմանափակ պատասխանատվության ընկերությանը:

3. Սույն հրամանը կարող է բողոքարկվել դատական կարգով այն ստանալուն հաջորդող երեսուն օրացուցային օրվա ընթացքում:

4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ԳԼԽԱՎՈՐ ՔԱՐՏՈՒՂԱՐ

Լ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

2024 թվականի հոկտեմբերի 31
ք. Հրազդան